կիրառելիս Դավրիժեցին, իհարկե, չանտեսելով այդ նվաճումները, առավել քան այլ առումներով հետևում է 5-րդ դարի պատմագրության, ի մասնավորի՝ Մովսես Խորենացու «Ողբի» ավանդներին: Այսինքն՝ ***ժանրը Դավրիժեցու պատմագրքում կիրառվել-դրսևորվել է իր նախաձևային հատկականություններով:*** Անշուշտ, Դավրիժեցու համար ուղենշային են եղել նաև Աստվածաշնչի համապատասխան հատվածները: Դա արտահայտվում է ինչպես պատկերային համակարգում և ճարտասանական հնարքների կիրառության նրբություններում, այլև ու հատկապես լեզվում: Պատահական չէ այն հանգամանքը, որ «Առաքել Դավրիժեցու Պատմության արտահայտիչ ու օտար բառերով մատակարարված լեզուն», երբ «շատ հազվադեպ իր տեղը զիջում է վերամբարձ ոճի և ***դասական*** գրաբարի»[38] (ընդգծումը մերն է–Ա.Ն), ապա հատկապես այն դեպքերում, երբ պատմիչը դիմում է ողբի ժանրային յուրահատկություններին ու հնարավորություններին և ներկայացնում իր ժողովրդին պատուհասած աղետներն ու արհավիրքները:

Հենրիկ Բախչինյանն էլ է իր հերթին գրում, որ «Նման հատվածներով Դավրիժեցին վերածնել է V դարի հայ պատմագրության հայրենասիրական ոգին ու գեղեցիկ, զգացմունքային պատումը»[39]: Խնդիրն առավել խորքային պլանով է դիտարկում Զավեն Ավետիսյանը. «Պատմության այս շրջանը (17–18-րդ դարերը–Ա.Ն.) նույնպես լի է բազում դրամատիկ ու ողբերգական իրադարձություններով, որոնց հետևանքների անմիջական կրողներն առաջին հերթին հայ պատմիչներն են, և այս ամենը գրի առնելիս միշտ օգնության է գալիս Պատմահոր փորձը: Նման դեպքերում հատկապես գործուն կիրառություն են գտնում ողբի ժանրային ձևերը, որոնք հիմնականում գալիս են Խորենացու պատմությունից»[40]:

---

38 ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, տե՛ս «Առաջաբանը», էջ 40:

39 ***Հենրիկ Բախչինյան,*** XVII-XVIII դարերի հայ գրականությունը, էջ 120:

40 ***Զավեն Ավետիսյան,*** Խորենացին մշակույթի գիտակցության մեջ, էջ 15: